ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԱՍՆԱԿԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում, ստորև ներկայացնում է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/62» ծածկագրով ընթացակարգի արդյունքում 26.06.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-7/62-3 պայմանագիրը 26.09.17թ-ին մասնակի լուծելու մասին համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: *Մասնակցի դիմումը՝* հիմք ընդունելով 26.06.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-7/62-3 գնման Պայմանագրի9.9 կետը 27951 կգ «կաղամբ» ապրանքատեսակի մասով Պայմանագիրը երկկողմանի մասնակի լուծելու առաջարկով:

Փոփոխության նկարագրություն: N ՇՀԱՊՁԲ-7/62-3 *պայմանագիրը մասնակի լուծելու մասին.*

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության որոշումը, ինչպես նաև Պայմանագրի 9.9 կետը, Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագիրը լուծել մասնակի՝ 27951 կգ «կաղամբ» ապրանքատեսակի մասով: Սույն Համաձայնագրի 1.1 կետով նախատեսված լուծման արդյունքում Պայմանագրի գինը նվազում է 2065578.9 (երկու միլիոն վաթսունհինգ հազար հինգ հարյուր յոթանասունութ ամբողջ ինը) ՀՀ դրամով և կազմում է 3811909.8 (երեք միլիոն ութ հարյուր տասնմեկ հազար ինն հարյուր ինն ամբողջ ութ) ՀՀ դրամ:

Փոփոխության հիմնավորում: Չի հակասում ՀՀ կառավարության որոշմանը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Տ.Աբրահամյանին:

Հեռախոս՝ *010-29-44-18*:

Էլ. փոստ՝ t.abrahamyan.*am:*

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն:

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

N ՇՀԱՊՁԲ-7/62-3 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԱՍՆԱԿԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 26.09.2017թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և Ա/Ձ Խոսրով Ջահինյանը, այսուհետև՝ «Վաճառող», մյուս կողմից, , երկուսը միասին՝ Կողմեր՝ հիմք ընդունելով կողմերի նախնական համաձայությունը, ինչպես նաև 26.06.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-7/62-3 գնման Պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 9.9 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1.Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք Պայմանագրի 9.9 կետը, Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագիրը լուծել մասնակի՝ «կաղամբ» ապրանքատեսակի մասով Սյունիքի տարածաշրջանից 11635 կգ, Շիրակի տարածաշրջանից 1260 կգ, Լոռի տարածաշրջանից 2940 կգ, Արարատի տարածաշրջանից 2240 կգ, Արագածոտնի տարածաշրջանից 160 կգ, Վայոց Ձորի տարածաշրջանից 1879 կգ, Տավուշի տարածաշրջանից 7837 կգ:(հունիս-հուլիս)

1.2 Սույն Համաձայնագրի 1.1 կետով նախատեսված լուծման արդյունքում Պայմանագրի գինը նվազում է 2065578.9 (երկու միլիոն վաթսունհինգ հազար հինգ հարյուր յոթանասունութ ամբողջ ինը) ՀՀ դրամով և կազմում է 3811909.8 (երեք միլիոն ութ հարյուր տասնմեկ հազար ինն հարյուր ինն ամբողջ ութ) ՀՀ դրամ:

2.Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման /կնքման/ պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ապրանքի հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

2.4 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	Ա/Ձ Խոսրով Ջահինյան
ք. Երևան Բագրևանդի 5	ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Ծաղկունք,
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Պարոնյան 38
Հ/Հ 900011144079	«Ակբա-կրեդիտ ագրիկոլ բանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 00867415	Հ/Հ 220219870734000
ՆՏԱ դեպարտամենտի պետ	ՀՎՀՀ 52160025
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Խ.ՋԱՀԻՆՅԱՆ